ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 721 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N 322-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի ապրիլի 23-ի «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Դեբետի զարգացում» ծրագրի մասին» N 322-Ա որոշման հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետի 1-ին կետի 8-րդ ենթակետում «Դեբետ բնակավայրի ամբողջ տարածքի արտաքին լուսավորության ցանցի շինարարական աշխատանքների իրականացում՝» բառերը փոխարինել «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի և դրան հարակից տարածքների լրացուցիչ շինարարական, սարքավորումների տեղադրման աշխատանքների իրականացում՝ այդ թվում՝ օդափոխության համակարգի, կենցաղային օգտագործման զտիչների տեղադրում, անհրաժեշտ սարքավորումների ներմուծում կամ ձեռքբերում՝» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02569972) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբեդի

միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 06910334) և «Սթրաքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07900546) 2025 թվականի հոկտեմբերի 21-ին կնքված՝ N 146-2025 պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի արդեն իսկ կառուցված շենքի, կաթսայատան և հարակից տարածքների հետ կապված լրացուցիչ շինարարական աշխատանքների իրականացում՝ 74,928,354 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի, անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

14.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ